

Այբ
կրթական հիմնադրամ

# 2016
տարեկան հաշվետվություն

Այբ
կրթական
հիմնադրամ

www.ayb.am
www.foundation.ayb.am

# 2016
տարեկան հաշվետվություն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**4** 2016 թվականը՝ մեկ հայացքով

**8** Տարին գործերով
Դավիթ Փախչանյան, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ

**10** Ինչու՞ «Այբ». գաղափար և առաքելություն

**12** «Այբ» ակումբի վարչություն

**14** «Այբ» ակումբի անդամներ

**16** «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ

**18** 2016-ի կիզակետում

**18** «Այբ» կրթական հանգույց

**24** «Այբ» դպրոց

**28** Ֆաբլաբ

**31** Կրթության գերազանցության ազգային ծրագիր
Արարատյան բակալավրիատ

**37** Դպրոցական մրցույթներ

**40** Դիլիջանի կենտրոնական դպրոց

**42** Ֆինանսական հաշվետվություն

**48** Մենք շնորհակալ ենք

**50** Ինչու միանալ «Այբ»-ին

**54** «Այբ» հիմնադրամի բարերարներ

**62** «Այբ»-ի կարևոր իրադարձությունները
2006 - 2016 թթ.




# 2016 թվականը՝ մեկ հայացքով

«Այբ» հիմնադրամի ստեղծած **Արարատյան բակալավրիատ** հայալեզու կրթական ծրագիրը ճանաչվեց միջազգային կառույցների կողմից և հաստատվեց Հայաստանում որպես պետական հանրակրթական ծրագիր:

Մեկնարկեց ծրագրին ՀՀ դպրոցների անդամակցության գործընթացը:

«Այբ» դպրոցի սաները հանձնեցին Արարատյան բակալավրիատի առաջին միջազգային քննությունները՝ հայերենով, և ստացան **միջազգայնորեն ճանաչված հավաստագրեր՝** անգլիական խորացված մակարդակներին (Cambridge A Levels) և ամերիկյան Advanced Placement-ին (AP) համազոր:

2016 թ. «Այբ» կրթական հիմնադրամը Հայաստան բերեց ևս մեկ միջազգային դպրոցական մրցույթ՝
**Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան:**

Սա «Այբ»-ի կազմակերպած 5-րդ դպրոցական մրցույթն է:

## 86.000

**մասնակից Հայաստանից և Արցախից**

«Այբ»-ի կազմակերպած հինգ դպրոցական մրցույթներում՝ «Կենգուրու», «Մեղու», «Ռուսական արջուկ», Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար, Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա (միայն 2016 թ.-ին):



**8**

**ուսանող Հայաստանից և սփյուռքից**
ստացավ կրթաթոշակ «Այբ» հիմնադրամից աշխարհի լավագույն բուհերում ուսանելու համար միայն 2016 թ.-ին: Մինչ օրս 35 հայ ուսանող ստացել է «Այբ»-ից կրթաթոշակ:

**149**

**ուսուցիչ 7 երկրից**
դասավանդում է «Այբ»-ի երկու դպրոցներում՝ Երևանում և Դիլիջանում

**470**

**աշակերտ 10 երկրից**
սովորում է «Այբ»-ի երկու դպրոցներում՝ Երևանում և Դիլիջանում

**1.990.282.896**
**ՀՀ դրամ կամ**

**4.139.954**
**ԱՄՆ դոլար**
միայն 2016 թվականին «Այբ» հիմնադրամն ուղղել է կրթական ծրագրերի իրականացմանը Հայաստանում և Արցախում

**221**

**բարերար 11 երկրից**
արդեն միացել է «Այբ»-ի բարերարների համայնքին՝ աջակցելով տարբեր ծրագրերի



2016 թվականը հոբելյանական էր «Այբ»-ի համար. լրացավ «Այբ» ակումբի և «Այբ» կրթական հիմնադրամի գաղափարի ծննդյան 10-րդ տարեդարձը: Իր գործունեության ընթացքում «Այբ»-ը կյանքի է կոչել **20-ից ավելի ծրագիր և նախաձեռնություն,** հավաքել և Հայաստանում ու Արցախում իր ծրագրերի միջոցով կրթության ոլորտի զարգացմանն ուղղել **29.527.286** ԱՄՆ դոլար*:

* 2011-2016 թթ. ընթացքում: Ներառված են «Այբ» ակումբի, «Այբ» հիմնադրամի, «Այբ» դպրոցի գործունեության շրջանակում կատարված ներդրումները, ինչպես նաև Դիլիջանի կենտրոնական դպրոցի շինարարության մոտավոր արժեքը:

# Տարին գործերով

## *Դավիթ Փախչանյան, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ*

2016 թվականին լրանում է «Այբ»-ի գործունեության տասներորդ տարին, և ես հպարտ եմ և ուրախ՝ արձանագրելու, որ 2016-ը դարձավ հիմնադրամի կյանքի ամենաուշագրավ և կարևոր նվաճումների տարի: Այս նվաճումներին ամբողջ «Այբ» համայնքով երկար էինք սպասում: Դրանց հասնելու համար աշխատել ենք օրնիբուն, հավատացել մեր երազանքին ու մեր ջանքերի արդյունավետությանը և դրանք իրականացնելիս զգացել ենք մեր ամեն գաղափարակցի, աջակցի, բարերարի, թիմակցի անգնահատելի աջակցությունն ու մասնակցությունը:



«Այբ»-ի մեծ երազանքն իրականություն դարձավ. մեր կրթական ծրագրերի շրջանակում մշակված և կատարելագործված նոր կրթական ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, սկսում է իր մեծ արշավը՝ մտնելով Հայաստանի մարզերի ավագ դպրոցներ: Միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան և աշխարհի հեղինակավոր կրթական կառույցների կողմից լավագույն այլ հարթակներին համազոր ճանաչված այս հայալեզու, մրցունակ ծրագիրը հասանելի է դառնում ամեն հայ աշակերտի համար. ՀՀ կառավարությունը 2016 թ. դեկտեմբերի 15-ի իր նիստում որոշում կայացրեց ներդնելու Արարատյան բակալավրիատը ՀՀ մարզային դպրոցներում:

Սա այն ձեռքբերումն է, որին «Այբ»-ը ձգտել է տասը տարի: Սա այն կետն է, որից հետո հետդարձի ճանապարհ չկա. մենք տարածում ենք կրթության գերազանցությունը ամբողջ երկրով և ապահովում բարձրորակ հայկական կրթության հնարավորություն ամեն հայ աշակերտի համար՝ իր հարազատ մարզում, իր հայրենիքում, անվճար:

Թեև 2016-ը գլխավորապես Արարատյան բակալավրիատի տարի էր «Այբ»-ի համար, մենք փորձել ենք ջանք չխնայել նաև մեր մյուս ծրագրերում նոր նվաճումներ արձանագրելու նպատակով: 2016-ին մենք Հայաստան բերեցինք մեր 5-րդ դպրոցական մրցույթը՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան, որը նոր հետաքրքիր հարթակ դարձավ ռոբոտաշինության և ճարտարագիտության սիրահար հայ աշակերտների համար: Այսպիսով՝ «Այբ»-ը Հայաստանում և Արցախում կազմակերպում է մաթեմատիկայի «Կենգուրու», հայերենի «Մեղու», ռուսերենի «Ռուսական արջուկ», Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարերը և Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը՝ տասնյակ հազարավոր աշակերտների ներգրավմամբ:





Իր արդեն սովորական դարձած հաջողություններով լի էր նաև մեր առանցքային ծրագրերից մեկի՝ «Այբ» դպրոցի 2015-2016 ուսումնական տարին: Այն նշանավորվեց որպես տարի, որում «Այբ» դպրոցի սաներն առաջինը հանձնեցին Արարատյան բակալավրիատի միջազգային քննություններն ու ստացան միջազգայնորեն ճանաչված հավաստագրերը՝ բացառիկ երևույթ թե՛ Հայաստանի, թե՛ համաշխարհային կրթական պատմության մեջ, երբ որևէ երկրի աշակերտներ իրենց մայրենի լեզվով հանձնում են Քեմբրիջի խորացված մակարդակներին համազոր քննություններ: Ունեցանք արծաթե և բրոնզե մեդալակիրներ միջազգային օլիմպիադաներում, արձանագրեցինք բարձր միջին արդյունքներ միջազգային քննություններից, տպավորեցինք օտարերկրացիներին ԱՄՆ-ի ամենահին ռոբոտաշինական մրցույթում, փայլեցինք հոգևոր երաժշտության փառատոնին Հունաստանում:

Հատկապես ուրախալի էր տարին «Այբ»-ի ծրագրերի մշտական աջակիցների՝ «Այբ» ակումբի անդամների թվի կտրուկ աճով: Սկսելով 8 հոգուց՝ այսօր «Այբ» ակումբն ունի աշխարհի տարբեր երկրներից 40 անդամ՝ «Այբ»-ի առաքելության 40 գաղափարակից, 40 նվիրյալ բարերար, ովքեր միացել են «Այբ» շարժմանն ու տեր են կանգնում հայկական կրթության ոլորտի բարեփոխումներին: Սա նաև տարի էր «Այբ» հիմնադրամի առօրյա կյանքում այդ անդամների առավել ակտիվ և անմիջական ներգրավվածության. ձևավորվել և հաջողությամբ գործում են «Այբ» ակումբի անդամներից բաղկացած մասնագիտական զանազան հանձնախմբեր, որոնց դերն է խորհրդատվական ուղղորդում տալ հիմնադրամի բաժինների ու ծրագրերի թիմերին:

Մենք հաճախ ասում ենք. «Այբ»-ը ոչ այլ ինչ է, քան «Այբ»-ի մարդիկ»: Տարբեր ծրագրերի 40 մշտական աջակից և 200-ից ավելի բարերար, ովքեր նվիրում են իրենց ժամանակը, մասնագիտական որակները, ֆինանսական լուրջ ներդրումները, մարդկային ջերմությունն ու պատասխանատվությունը՝ հանուն հայկական կրթության մրցունակության բարձրացման: 200-ից ավելի աշխատակից և ուսուցիչ, ովքեր ջանք չեն խնայում «Այբ»-ի լուսավորության ջահը բարձր պահելու և առաջ տանելու: Մեր հաջողության ամենամեծ գրավականը հենց այն է, որ մենք կարողացել ենք եզակի որակներով մարդկանց համախմբել մեր կյանքն ու մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելու գաղափարի շուրջ:

*Միացե՛ք «Այբ»-ին:*
*Գտե՛ք կրթությանը նպաստ բերելու ձեր ձևը:*
*Օգնե՛ք մեզ անելու ավելին:*



*Մենք վերափոխում ենք մարդկային կյանքն ու մեր երկրի ապագան՝ ձևավորելով կրթության նոր մշակույթ, ստեղծելով օրինակելի կրթական միջավայրեր և կերտելով որակապես նոր սերունդներ:*

# Ինչո՞ւ «Այբ». գաղափար և առաքելություն

«Այբ»-ը սկսվել է «Այբ» ակումբից: «Այբ» ակումբը ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություն է, որի առաքելությունն այն մարդկանց միավորումն է, ովքեր գիտակցում են կրթության առաջնային դերը Հայաստանի վերափոխման գործում և ձգտում ստեղծելու որակյալ, բազմաբնեռ, օրինակելի կրթական համակարգ մեր երկրում: «Այբ» ակումբը զարգացնում է կրթության մեկենասության գաղափարը և ստեղծում կրթության աջակիցների համաշխարհային հզոր ցանց, որի համակարգված ջանքերի և ներդրումների շնորհիվ կկերտվեն ուսյալ, առաքինի, ապագայի տեսլականով երիտասարդների նոր սերունդներ՝ պատրաստ վերափոխելու աշխարհը դեպի լավը: «Այբ» ակումբը, սահմանելով ամբողջ «Այբ» կրթական շարժման գաղափարային բովանդակությունն ու զարգացման ռազմավարությունը, իր առաքելությունն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամի գործունեության միջոցով:

Ակումբի անդամները, լիովին կիսելով կառույցի առաքելությունն ու նպատակները, կամավոր պարտավորություն են ստանձնում իրենց մասնակցությունը բերելու «Այբ»-ին՝

- **Ժամանակի ներդրմամբ՝** հանդես գալով «Այբ»-ի ղեկավար մարմիններում, կայացնելով որոշումներ, ներգրավվելով «Այբ»-ի մենտորական ծրագրում և սեփական օրինակով, խոսքով ու գործով հոգ տանելով երիտասարդների մասին, հաղորդակից դարձնելով նրանց սեփական փորձին, ձեռքբերումներին, գիտելիքներին, օգնելով առաջին քայլերը կատարել կարիերայի կառուցման ու կյանքում կայացման գործում.

- **ֆինանսական միջոցների ներդրմամբ՝** տարեկան անդամավճարների միջոցով ապահովելով «Այբ» հիմնադրամի ֆինանսական կայունությունն ու կենսագործունեությունը և նպաստելով «Այբ»-ի ծրագրերի իրականացմանն ու առաջխաղացմանը:



# «Այբ» ակումբի վարչություն

«Այբ» ակումբի գործառնական կառավարումն իրականացվում է վարչության կողմից, որը բաղկացած է հինգ անդամից: Վերջիններս ընտրվում են ակումբի անդամների կողմից փակ քվեարկությամբ՝ 3 տարին մեկ:

Կառավարելով ակումբի ընթացիկ գործունեությունը՝ վարչությունը մշակում է այնպիսի մեխանիզմներ և ստեղծում այնպիսի միջավայր, որը նպաստում է յուրաքանչյուր ակումբի անդամի ներգրավվածությանը թե՛ ակումբի և թե՛ «Այբ» համակարգում գործող բոլոր կառույցների գործունեության մեջ:

## «Այբ» ակումբի վարչության* անդամներն են՝

### Արտաշես Շիրիկյան
**նախագահ** | Ռուսաստան / Հայաստան



* «Այբ» ակումբի վարչությունն այս կազմով գործելու է մինչև 2017 թ. դեկտեմբերի 29-ը:

### Ավետիք Չալաբյան
Ռուսաստան / Հայաստան



### Արմինե Առուստամյան
ԱՄՆ



### Ռուբեն Հարությունյան
Ռուսաստան



### Սամվել Դովլաթյան
Հայաստան



# «Այբ» ակումբի անդամներ

| | |
|---|---|
| Անահիտ Ադամյան | Ռուսաստան |
| Աշոտ Ասլանյան | Ռուսաստան / Հայաստան |
| Աշոտ Թումասյան | Ռուսաստան |
| Աշոտ Մկրտչյան | Ռուսաստան / Կիպրոս |
| Ավետիք Չալաբյան | Ռուսաստան / Հայաստան |
| Արա Հայրապետյան | ԱՄՆ |
| Արամ Արամյան | Հայաստան |
| Արամ Մեհրաբյան | Հայաստան |
| Արամ Փախչանյան | Հայաստան |
| Արեգ Ջաքոյան | Ռուսաստան |
| Արթուր Ալավերդյան | Ռուսաստան |
| Արթուր Բերդ | ԱՄՆ |
| Արթուր Թովմասյան | Մեծ Բրիտանիա |
| Արթուր Ջանիբեկյան | Ռուսաստան |
| Արմեն Խեչոյան | Բելառուս |
| Արմեն Կազարով | Ռուսաստան |
| Արմինե Առուստամյան | ԱՄՆ |
| Արսեն Գալստյան | Ռուսաստան |
| Արսեն Ղազարյան | Հայաստան |
| Արսեն Մամիկոնյան | ԱՄՆ |
| Արտակ Հովհաննիսյան | Ռուսաստան |
| Արտաշես Շիրիկյան | Ռուսաստան / Հայաստան |
| Արտյոմ Գրիգորյան | Լյուքսեմբուրգ |
| Դավիթ Յան | ԱՄՆ |
| Դավիթ Փախչանյան | Հայաստան |
| Լևոն Ղազարյան | ԱՄՆ |
| Լևոն Ֆրնջիբաշյան | ԱՄՆ |
| Կարեն Մուսաելյան | ԱՄՆ |
| Կարո Սարգսյան | Ռուսաստան |
| Մանուկ Հերգնյան | Հայաստան |
| Մարտիրոս Մինասյան | Կիպրոս |
| Տ. Մեսրոպ քահանա Արամյան | Հայաստան |
| Յուլիա Դանիելյան | Հայաստան |
| Նատալյա Ռիժկովա | Հայաստան |
| Ռուբեն Հարությունյան | Ռուսաստան |
| Ռուբեն Սիմոնյան | ԱՄՆ |
| Սահակ Պետրոսյան | ԱՄՆ |
| Սամվել Դովլաթյան | Հայաստան |
| Սարգիս Բադալյան | Ռուսաստան |
| Սերգեյ Ստեփանյանց | ԱՄՆ |
| Սուրեն Հարությունյան | Ռուսաստան |
| Վահե Ամիրբեկյան | ԱՄՆ |
| Վարդան Բաբիկյան | Ռուսաստան |
| Վիկտոր Ակուլյան | Ռուսաստան |

**40 ակումբի անդամ,**
ովքեր մշտապես աջակցում են «Այբ» հիմնադրամի ծրագրերին: Հիմնադրվելուց ի վեր ակումբն աճել է 5 անգամ:

**«Այբ» դպրոցի 192 շրջանավարտներ**
արդեն ձեռք են բերել իրենց մենտորներին՝ ի դեմս «Այբ» ակումբի անդամների



**«Այբ» ակումբի անդամները ներդրել են**
**397.900.000 ՀՀ դրամ**
«Այբ» հիմնադրամի ծրագրերի իրականացման ու զարգացման համար
(միայն 2016 թ.-ին)

**27**
**աշխատանքային նիստեր և համայնքային միջոցառումներ**

«Այբ»-ի հոբելյանական երեկոներ

«Այբ»-ի զարգացման և նոր կրթական ծրագրերի ներդրման ռազմավարության վերլուծություն և վերամշակում

«Այբ» ակումբի անդամների վարպետության դասեր

«Այբ»-ի մենտորության ծրագրի հանդիսավոր արարողություն

«Այբ»-ի 10-ամյակի տոնակատարություններ

Ընտանեկան հավաքներ



# «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ

«Այբ» կրթական հիմնադրամի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որում հերթագայությամբ ընդգրկվում են «Այբ» ակումբի վեց անդամ-ներ: Հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է:

## «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի* անդամներն են՝

Դավիթ Փախչանյան
նախագահ | Հայաստան



Արամ Փախչանյան
Հայաստան



Կարո Սարգսյան
Ռուսաստան



Սարգիս Բաղալյան
Ռուսաստան



Արեգ Զաքոյան
Ռուսաստան



Աշոտ Մկրտչյան
Ռուսաստան/Կիպրոս



* Հոգաբարձուների խորհուրդն այս կազմով գործելու է մինչև 2017 թ. մայիսի 25-ը:

# 2016-ի կիզակետում

*Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում 2016 թվականին «Այբ»-ի գործունեության կիզակետում գտնվող ծրագրերը և դրանց շրջանակում արձանագրված նվաճումները:*

## «ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

«Այբ» կրթական հանգույցը «Այբ» հիմնադրամի կարևորագույն և խոշորածավալ ծրագրերից է: Այն դպրոցական ավան է, որի յուրաքանչյուր տարր կրում է կրթության հետ կապված բովանդակություն և նպաստում ուսյալ, մրցունակ, առաքինի սերնդի ձևավորմանը: «Այբ» կրթականհանգույցը կրթվող համայնքի միջավայր է, ուր խաչաձևվում են մանկավարժությունը, գիտությունը, արվեստը, գործարարությունը և հասարակական կյանքի այլ ոլորտներ: Մենք ձգտում ենք իրական կապ ստեղծել կրթության և կյանքի զարգացման առաջատար ուղղությունների միջև՝ ուսումնառության գործընթացը չսահմանափակելով սոսկ գիտե-լիքների փոխանցմամբ:

«Այբ կրթական հանգույց» ծրագրի զարգացումն ու ընդլայնումը «Այբ» հիմնադրամի առանցքային նպատակներից մեկն է: Հանգույցը յուրատեսակ փոքրիկ ավան է՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, ֆաբլաբ, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ: Այն զբաղեցնում է 6,95 հա հողատարածք Երևանի Արաբկիր վարչական շրջանում և նախատեսված է 800 աշակերտի համար:

**7 հա տարածք՝**
իր 8 կրթական բաղադրիչներով, նախատեսված 800 աշակերտի համար

**4.300 քմ**
ուսումնական մակերես՝ «Այբ» դպրոցի գործող երեք մասնաշենքում, +4.000 քմ՝ բացվող նոր մասնաշենքում

**194 բարերար 11 երկրից**
արդեն միացել է «Այբ»-ի դպրոցաշինության ծրագրին
(2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

«Այբ»-ի բոլոր բարերարների ցանկը տես այստեղ՝
*foundation.ayb.am/hy/supporters*





# «Այբ» կրթական հանգույցի բաղադրիչները

## Դպրոց

Դպրոցը «Այբ» կրթական հանգույցի առանցքային բաղադրիչն է: Այսօր գործում են «Այբ» տարրական, միջին և ավագ դպրոցները՝ ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով ու լաբորատորիաներով հագեցած, ուսումնառությանը տրամադրող գեղեցիկ ու հարմարավետ շենքային պայմաններով: «Այբ» դպրոցում ընդհանուր առմամբ ուսանում է 351 աշակերտ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): Ավարտին է հասցվում նոր քառահարկ մասնաշենքի շինարարությունը, որը նախատեսված է մոտ 200 աշակերտի համար:

## Եկեղեցի և համայնքային կենտրոն

«Այբ» կրթական ավանում եկեղեցու առկայությունը խորհրդանշում է ճանաչողության ու բարոյական արժեքների կապը: «Այբ» դպրոցը աշխարհիկ դպրոց է, և Սրբոց Թարգմանչաց եկեղեցին գործելու է ոչ թե դպրոցին կից, այլ լինելու է մեծ կրթական ավանի մի մասը: Եկեղեցու նախագիծը պատրաստ է, նախապատրաստական շինարարական աշխատանքները՝ ավարտված:

## Ֆաբլաբ

Ֆաբլաբը ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի կողմից ստեղծված արհեստանոց-լաբորատորիա է, որն աշակերտներին հնարավորություն է տալիս գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ռոբոտաշինության, ճարտարագիտության, տեխնոլոգիայի, մեքենաշինության և այլ ոլորտներում, ինչպես նաև ստեղծում է հետազոտությունների նոր հարթակ՝ երիտասարդ հայ գիտնականների համար: Բացված լինելով 2015 թվականին Երևանի «Այբ» դպրոցին և Դիլիջանի կենտրոնական դպրոցին կից՝ այսօր երկու ֆաբլաբերը ծառայում են որպես աշակերտների ստեղծագործ ու նորարար գաղափարների իրականացման համար անսահմանափակ հնարավորություններով դաշբնոցներ:

## Գիտության և տեխնոլոգիայի կենտրոն

Կենտրոն-թանգարանը կխթանի երիտասարդների շրջանում գիտության հանդեպ հետաքրքրությունը, փորձարարական գիտությունների ուսումնասիրման գործում փորձերի կատարումը, ուսուցիչների մասնագիտական զարգացումը: Այժմ գիտության և տեխնոլոգիայի կենտրոնի գաղափարը լրամշակվում է, բանակցություններ են ընթանում մասնագիտական միջազգային կառույցների և հետաքրքրված կողմերի հետ՝ գտնելու կենտրոնի առաքելության ու նպատակների, գործունեության ծավալի լավագույն լուծումները, ինչպես նաև կենտրոնի ստեղծման ֆինանսական աղբյուրները:

## Սպորտային համալիր

Առողջ մարմնում՝ առողջ հոգի և առողջ միտք: «Այբ» կրթական ավանում գործելու է մեծ սպորտային համալիր, որը կբավարարի սպորտի պարտադիր առարկաների, առողջ ապրելակերպի և ակտիվության պահանջները ամբողջ համայնքի համար:

## Մանկապարտեզ

Նախադպրոցական տարիքի երեխաները նույնպես կներգրավվեն ամբողջական կրթության գաղափարի իրագործման մեջ: Մանկապարտեզի նպատակն է լինելու բացահայտել և զարգացնել երեխաների ներուժը՝ ամրապնդելով ճանաչողության նկատմամբ սերն արդեն շատ վաղ տարիքից:

## Հանրակացարաններ և հյուրատուն

Նախատեսված են լինելու Հայաստանի մարզերից և արտերկրից աշակերտների, հրավիրյալ դասախոսների ու ուսուցիչների, ավանի հյուրերի համար:

## Կանաչապատ տարածքներ

Կանաչապատ հատվածները շրջապատում են դպրոցը՝ ծառայելով որպես հանգստի գոտի, համայնքի հավաքատեղի, ինչպես նաև ուսման և առողջ ապրելակերպի համար բարենպաստ միջավայր:

# 4.320.133.000
**ՀՀ դրամ կամ**
# 10.204.970
**ԱՄՆ դոլար**

**արդեն ներդրվել է «Այբ» կրթական հանգույց» ծրագրում 2010-2016 թթ. ընթացքում**

«Այբ» կրթական հանգույցը («Այբ» դպրոցը) հոգաբարձուների խորհրդի կողմից ղեկավարվող հիմնադրամ է և հասարակական կառույց: «Այբ»-ը չունի սեփականատերեր և բաժնետերեր: «Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 70%-ն ամեն տարի ստանում է կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում):









# Դարձի՛ր կրթության մեկենաս

*Օգնիր մեզ անելու ավելին հայկական կրթության համար*

Նվիրատվություն կատարելով «Այբ»-ին՝ դու միանում ես կրթության աջակիցների համաշխարհային ցանցին, օգնում կերտելու նոր սերունդ, ստեղծում Հայաստանի զարգացմանը նպաստող կայուն և արժեքավոր մի բան: Ցանկացած նվիրաբերություն անգին է մեզ համար, յուրաքանչյուր գիտակցված ներդրում՝ արժեքավոր:

Գրի՛ր մեզ *donation@ayb.am* հասցեով, և մենք կապ կհաստատենք քեզ հետ՝ քննարկելու մեր ծրագրերին մասնակցության հնարավոր տարբերակները: Կամ պարզապես այցելի՛ր մեզ «Այբ» դպրոց՝ Երևան, Թբիլիսյան խճ. 11/11՝ տեղում ամեն ինչ տեսնելու և որոշելու համար:

*foundation.ayb.am/hy/donate*

Նվիրաբերիր

# «ԱՅԲ» ԴՊՐՈՑ

«Այբ» դպրոցը սովորելու մի նոր միջավայր է, ուր ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման: «Այբ» դպրոցի նպատակն է դառնալ 21-րդ դարի հայկական դպրոցի մոդել: «Այբ» դպրոցի առաքելությունն է` ձևավորել ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ:

«Այբ» դպրոցի կրթական փիլիսոփայությունը խարսխված է մի քանի կարևոր սկզբունքների վրա, որոնց ամբողջականությունը կազմում է դպրոցի բովանդակային ճարտարապետությունը: «Այբ»-ում մենք ապահովում ենք ամբողջական կրթություն՝ նպատակ ունենալով ձևավորել համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ մարդկանց. դպրոցում համադրվում են գիտությունները, հումանիտար առարկաները, արվեստներն ու սպորտը: Առանց խախտելու համակողմանի ու ամբողջական կրթության սկզբունքը` աշակերտին հնարավորություն է տրվում նաև խորանալու իր նախընտրած առարկաների մեջ, ուսումնասիրելու, ստեղծագործելու, դնելու իր ապագա մասնագիտացման հիմքերը: Դպրոցի միջավայրն ու մտածված համալրվածությունը թույլ են տալիս առավել լայն բացել մարդու ստեղծագործական ներուժը, նպաստել նրա ստեղծագործ ակտիվության դրսևորմանն ու զարգացմանը: Մենք սովորեցնում ենք երեխաներին սիրել աշխատել և աշխատելով սովորել շատ կարևոր հմտություններ, որոնք, միակցվելով գիտելիքի հետ, կապահովեն նրանց ապագա հաջողությունը: Բացի սոսկ գիտելիքների ու հմտությունների փոխանցումից` դպրոցն ունի նաև շատ կարևոր դաստիարակչական, սերնդակերտման գործառույթ, ուստի մենք մեծ շեշտ ենք դնում այն արժեքների վրա, որոնցով զինված՝ երեխան դպրոցից դուրս կգա մեծ կյանք և կդառնա իր հայրենիքին ու աշխարհին պիտանի մարդ:

Բացված լինելով 2011 թվականին՝ «Այբ» դպրոցն այսօր ունի եռաստիճան համակարգ՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) դպրոցներ:





*«Այբ» դպրոցն այսօր գործում է որպես ուսուցչական ու դասավանդման լավագույն տեխնոլոգիաների ու մեթոդաբանությունների մշակման ու փորձարկման լաբորատորիա, որտեղից, շնորհիվ «Այբ» հիմնադրամի ու ՀՀ կառավարության կողմից համատեղ իրականացվող երկարաժամկետ համազգային ծրագրի, այդ փորձը տարածվելու է դեպի Հայաստանի ու Արցախի այլ դպրոցներ:*

**133** **ուսուցիչ** **7** **երկրից**

դասավանդում է «Այբ» դպրոցում

**351** **աշակերտ** **7** **երկրից**

ուսանում է «Այբ» դպրոցում

**42** **առարկա** **8** **առարկայախմբում**

+ 8 նախագծային առարկա դասավանդվում են «Այբ» ավագ դպրոցում.
27 և 17 առարկա դասավանդվում են, համապատասխանաբար, միջին ու տարրական դպրոցներում:

**Աշակերտների 70%-ը ամեն տարի ստանում է կրթաթոշակ**

«Այբ» ավագ դպրոցը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է:

*«Այբ» դպրոցի բոլոր տարիների ուշագրավ ձեռքբերումները՝ մեկ նյութում և մեկ շնչով*

*www.aybschool.am*

*«Այբ» դպրոց / Ayb School*

*AybSchool*

*AybSchool*







# Մենք փնտրում ենք աջակիցների

*Միացիր «Այբ» դպրոցի ծրագրին և դարձրու աշխարհին ավելի լավը*

**Նվիրիր $150,** և երեխաները կունենան նոր նյութեր ու սարքավորումներ իրենց գիտության դասերի համար:
**Նվիրիր $600** և հովանավորիր 1 տաղանդավոր երեխայի 1 ամսվա ուսումը «Այբ» դպրոցում:
**Նվիրիր $6000,** և մեկ աշակերտ ամբողջ տարի կսովորի «Այբ»-ում հենց քո աջակցությամբ:
**Նվիրիր $50.000** և քո անունով կոչիր մեկ լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում:
**Նվիրիր $100.000** և դարձիր «Այբ» կրթական հանգույցի միջուկ-դրամագլխի բարերար՝ ստանալով արտոնություն՝ մասնակցելու որոշումների կայացմանը:

*Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ առաջարկ, գրիր մեզ* ***donation@ayb.am*** *հասցեով, և միասին կքննարկենք ամենահարմար տարբերակը:*

*foundation.ayb.am/hy/donate*

Նվիրաբերիր

# ՖԱԲԼԱԲ

«Այբ» հիմնադրամը Հայաստան է բերել ԱՄՆ-ի Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (ՄՏԻ, MIT) ստեղծած և աշխարհով լայնորեն տարածվող նորարարական երկու արհեստանոց-լաբորատորիա՝ ֆաբլաբ, որը թույլ է տալիս կրթությունը դարձնել կիրառական: Մոտ $500.000 արժողությամբ երկու ֆաբլաբեր բացվեցին Երևանի «Այբ» և Դիլիջանի կենտրոնական դպրոցներին կից՝ շնորհիվ «Այբ»-ի և ՄՏԻ-ի բազմամյա համագործակցության՝ ՀՀ Կենտրոնական բանկի և ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության աջակցությամբ:

Ֆաբլաբը հատուկ սարքավորումներով և նյութերով զինված արհեստանոց է, որը հնարավորություն է տալիս նորարարական տեխնոլոգիաներ կիրառելու գիտական տարբեր ոլորտներում և արտադրելու գրեթե «ամեն ինչի» ձևանմուշ: Ֆաբլաբերում երեխաները կարողանում են զանազան հետազոտություններ ու փորձարկումներ կատարել արտադրության, ռոբոտաշինության, դիզայնի, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Ֆաբլաբի ծրագիրը Հայաստանում նորարարական «խելացի» լաբորատորիաների ներդրման բացառիկ փորձ էր: Եռաչափ տպիչ, լազերային կտրող սարք, մետաղահատ հաստոց, ալեհավաքներ, տպագրական կաղապարներ ու ճկուն սխեմաներ ստեղծող սարք… Այսօր ֆաբլաբերը մեր աշակերտների ամենասիրված վայրերից են դպրոցում. այստեղ ստեղծելու երևակայության սահմանափակում չկա:

*Ֆաբլաբում ստեղծված ռոբոտների շնորհիվ «Այբ»-ի սաներն արդեն հասցրել են փայլել ռոբոտաշինության և ճարտարագիտության ոլորտում հայաստանյան և միջազգային ամենահեղինակավոր մրցույթներում, ինչպես նաև գործի դնել իրենց երևակայությունը երկրի պաշտպանության համար պիտանի սարքերի արտադրությունում:*





**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՐՑԱՆԱԿ՝ HONDA INNOVATION AWARD, ԵՎ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ**
**ԱՄՆ-ի 2016 թ. «Ռոբոտիկայի ազգային մարտահրավեր» (National Robotics Challenge) մրցույթում**

Ռոբոտն ամբողջությամբ մշակվել և արտադրվել է ֆաբլաբում՝ աշակերտների ձեռքով:

**ավագ դպրոցի աշակերտների 10%-ը**

մշտապես ներգրավված է ֆաբլաբում իրականացվող նախագծերում

*Ավելին ֆաբլաբի մասին՝*



# Մեր ֆաբլաբի խմբակը փնտրում է հովանավորների

Որքա՜ն բան կարելի է պատրաստել և որքա՜ն օգուտ բերել մարդկությանը՝ անօդաչու թռչող սարքից կամ ջրի հատակն ուսումնասիրող ռոբոտից մինչև ական փնտրող սարքեր կամ մարդու ձեռքը փոխարինող արհեստական ձեռք… Ահա թե ինչ նախագծերի վրա են աշխատում այսօր աշակերտները ֆաբլաբում:

Դարձիր ֆաբլաբի նախագծերի հովանավոր: Գրիր մեզ *donation@ayb.am* հասցեով, և միասին կքննարկենք աջակցության ձևերը: Կամ անիջապես համեցիր ֆաբլաբ. այստեղ հետաքրքիր է:

*foundation.ayb.am/hy/donate*

Նվիրաբերիր



# ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

## Արարատյան բակալավրիատ

2016 թվականը «Այբ»-ում հիրավի Կրթության գերազանցության ազգային ծրագրի տարի էր, ծրագրի, որը մի մեծ քայլ կատարեց հայկական կրթության ոլորտում համակարգային փոփոխություններ բերելու իր առաքելությանն ընդառաջ, և որը նոր ճանաչումներ ստացավ ու նոր գործուն քայլեր կատարեց՝ իր ազդեցության դաշտում ներառելով ՀՀ տասնյակ դպրոցներ:

Պետության հետ համատեղ և միջազգային բարձր գործընկերությամբ իրականացվող լայնածավալ կրթական այս նախաձեռնության տեսլականն է` ստեղծել և հայկական բոլոր դպրոցների համար հասանելի դարձնել միջազգայնորեն մրցունակ նոր դպրոցական կրթական ծրագիր, ինչպես նաև պատրաստել համաշխարհային դասավանդման լավագույն փորձով ու գիտելիքներով զինված ուսուցիչների մեծ համայնք՝ որպես որոշիչ գործոններ երկրի հանրակրթության համակարգի մրցունակության բարձրացման, երկարաժամկետ զարգացման և համընդհանուր առաջընթացի համար:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի (ԿԳԱԾ) գաղափարը «Այբ» կրթական հիմնադրամինն է: Ծրագիրն իրականացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և «Այբ» հիմնադրամը: Ծրագիրը համաֆինանսավորվում է ՀՀ կառավարության և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

*Աշխարհում հավաստագրման ու ճանաչման ամենահեղինակավոր կառույցներից մեկը՝ Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալությունը (UK NARIC),* ***ճանաչեց «Արարատյան բակալավրիատ»*** *հայալեզու կրթական ծրագիրը որպես* ***բրիտանական խորացված մակարդակներին (GCE A Levels) և ամերիկյան Advanced Placement-ին (AP) համազոր:***

Սա նշանակում է, որ հայ երեխաները Հայաստանում իրենց մայրենի լեզվով կստանան միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան կրթություն, որը մրցունակ է համաշխարհային մակարդակով և իր որակով չի զիջում լավագույն այլ կրթական հարթակներին:

Այսպիսով՝ ՀՀ ԿԳ նախարարության և «Այբ» հիմնադրամի համատեղ ջանքերի արդյունքում Հայաստանն իր ուրույն տեղը գրավեց համաշխարհային կրթության գերազանցության քարտեզի վրա: Այս նվաճումը բացառիկ է նաև նրանով, որ Արարատյան բակալավրիատը հայալեզու է, հայաշունչ, հիմնված հայկական կրթության լավագույն ավանդների և համաշխարհային կրթության առաջատար ձեռքբերումների վրա:

Այս ճանաչումը նշանակում է նաև, որ հայ երեխաները ԱԲ-ի եռամյա ծրագիրն ավարտելուց հետո հայերենով կարող են հանձնել միջազգային քննություններ և այդ քննությունների արդյունքների հիման վրա ընդունվել աշխարհի լավագույն համալսարաններ կամ այդ քննությունների արդյունքները կրեդիտավորել այդ համալսարաններում:

## ◆ *Արարատյան բակալավրիատը հաստատվեց Հայաստանում որպես պետական հանրակրթական ծրագիր*

Մեկնարկեց ծրագրին ՀՀ մարզային դպրոցների անդամակցության գործընթացը:

2016 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարությունը որոշեց.

***թույլատրել*** «Այբ»-ի մշակած «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիրը ներդնել ՀՀ մարզերի հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում.

***հատկացնել*** ՀՀ բուհերում նպատակային տեղեր ԱԲ-ի ծրագրի շրջանավարտների համար.

***ճանաչել*** ԱԲ-ի ընդունելության քննությունները՝ միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններին զուգահեռ:







**65 աշակերտ հանձնեց Արարատյան բակալավրիատի առաջին քննությունները՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաներից**

ԱԲ-ի քննությունների արդյունքներն արդեն ճանաչվում են մի շարք եվրոպական հայտնի համալսարանների կողմից:

**2016 թ. ընթացքում Լոնդոնի կրթության ինստիտուտի և «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի**

**12 մասնագետ 14 այցով**

**եկավ Հայաստան:**

Նպատակը՝ ԱԲ-ի ուսուցիչների զարգացման ծրագրի կատարելագործում, ԱԲ-ի առարկայական ծրագրերի լրամշակում, ԱԲ-ի առաջին քննությունների անցկացմանն աջակցություն և վերահսկողություն:

**2016 թ. ավարտի դրությամբ՝**

**52 ուսուցիչ ամբողջությամբ ավարտել է ԱԲ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի փորձնական փուլը (10-11 ամիս տևողությամբ)՝ իրականացված Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL) Կրթության ինստիտուտի մասնագետների կողմից:**

Եվ սա առաջին ալիքն է ԿԳԱԾ-ի շրջանակում հարյուրավոր ուսուցիչների զարգացման գործում, ովքեր կդասավանդեն «Արարատյան բակալավրիատ» ծրագրով դպրոցներում՝ ամբողջ հանրապետությամբ մեկ:



## Դեն Բրեյ

*Քեմբրիջի համալսարանի «Քեմբրիջի միջազգային քննություններ» կենտրոնի (համագործակցում է աշխարհի ավելի քան 160 երկրի հետ) փոխտնօրեն*

Մեկ բան, որ հատկապես առանձնանում և տպավորիչ է դարձնում մեր համագործակցությունը Հայաստանի հետ, այն արագությունն է, որով Արարատյան բակալավրիատն առաջ է ընթանում: Դեռ երկու տարի էլ չի անցել այն օրից, երբ մենք սկսեցինք քննարկումները, իսկ այսօր արդեն ունենք բարձրորակ և միջազգայնորեն ճանաչված կրթական ծրագիր: Դեռ ավելին, մենք ունենք աշակերտներ, ովքեր հանձնել են ԱԲ-ի քննությունները և ստացել ԱԲ-ի հավաստագիրը: Եվ այդ ամենը՝ անհավանականորեն կարճ ժամանակահատվածում:

Հայաստանում ստեղծվել է մի որակավորում, որն այսօր համազոր է միջազգային որակավորումներին: Կարծում եմ, որ «Այբ» կրթական հիմնադրամի հետ միասին այնպիսի հիմքեր ենք դրել, որոնք բացում են պատուհան Հայաստանի համար՝ հայտնվելու աշխարհի հայտնի կրթական համակարգերի կողքին:





## Փոլի Գլեգ

*Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի դասախոս*



Մեր համագործակցության նպատակը Հայաստանում դասավանդման և հետևաբար նաև ուսումնառության որակը բարելավելն է: Ծրագիրը մշակվել է հենց այս նպատակին ծառայելու համար: Ծրագիրը ձգտում է զարգացնելու ուսուցիչների գիտելիքները այն տեսությունների և կիրառույթների վերաբերյալ, որոնցից նրանք՝ որպես ուսուցիչներ, կարող են օգտվել: Ծրագիրը նաև նպատակ ունի ամրապնդելու ուսուցիչների վստահությունը և հմտությունները՝ օգնելու, որ նրանք իրենց աշխատանքում կիրառեն մեր կողմից իրենց մատուցվող գիտելիքի «փաթեթը»: Կարծում եմ՝ դա հիանալի հնարավորություն է: Ծրագիրն ընդլայնվում է՝ իր շուրջ ստեղծելով հսկայական ցանց, ինչը նշանակում է, որ ուսուցիչները դառնում են Հայաստանում ձևավորվող կրթական շարժման մի մաս և կրթության առաջամարտիկներ: Պետք է անպայմանորեն լինել այդ շարժման մաս, ինչը կնպաստի ուսուցիչների ոգևորության պահպանմանը և փորձառության զարգացմանը:

## Հեթըր Ուեսթ

*Քեմբրիջի համալսարանի խորհրդատու*



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոնը համապատասխանում է բոլոր միջազգային չափանիշներին, հետևաբար Արարատյան բակալավրիատի կրթական ծրագրով սովորող բոլոր աշակերտների գնահատականները համազոր են աշխարհի բոլոր աշակերտների գնահատականներին, ինչը հիանալի հնարավորություններ կստեղծի հայ աշակերտների կայացման համար:



Araratian Bac.

Արարատյան բակալավրիատ /
Araratian Baccalaureate

foundation.ayb.am/hy/
projects/npee

araratbaccalaureate.am

Եթե ունես Կրթության գերազանցության ազգային ծրագրին աջակցելու առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով:

foundation.ayb.am/hy/donate

Նվիրաբերիր

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

Արդեն ութ տարի է, ինչ «Այբ» հիմնադրամը Հայաստանում, և վեց տարի՝ Արցախում, անցկացնում է միջազգային և հայաստանյան ամենահայտնի ու սիրված դպրոցական զանգվածային մրցույթները: Նպատակը՝ բարձրացնել աշակերտների լայն զանգվածների շրջանում հետաքրքրությունն ուսման հանդեպ, նորովի ներկայացնել այս կամ այն դպրոցական առարկան ու խթանել հայ աշակերտների ակտիվ մասնակցությունը հետաքրքիր միջազգային ու տեղական մրցույթներին:

*«Այբ»-ը Հայաստանում նոր չափանիշներ սահմանեց զանգվածային մրցույթների անցկացման և թեստերի ստուգման գործում: Այսօր մրցույթների կազմակերպման «Այբ»-ի տեխնոլոգիաները կիրառվում են կրթական ոլորտի նաև այլ ծրագրերում:*



# 86.000

**մասնակից Հայաստանից և Արցախից**

«Այբ»-ի կազմակերպած հինգ դպրոցական մրցույթներում միայն 2016 թվականին

**«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթ**

8 տարի` Հայաստանում,
6 տարի` Արցախում

**«Ռուսական արջուկ» ռուսաց լեզվի միջազգային մրցույթ**

7 տարի` Հայաստանում,
6 տարի` Արցախում

**Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշար**

7 տարի՝ Հայաստանում,
1 տարի՝ նաև արցախյան թիմի մասնակցություն

**«Մեղու» հայոց լեզվի մրցույթ**

3 տարի՝ Հայաստանում և Արցախում

**Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա**

Ազգային փուլը Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցավ 2016 թ.-ին

*Իմացիր ավելին «Այբ»-ի մրցույթների մասին կայքից և ֆեյսբուքյան էջից*

*foundation.ayb.am/hy/projects*

*«Այբ»-ի մրցույթներ / Ayb Contests*







# Մենք փնտրում ենք հովանավորների

Գրիր մեզ *donation@ayb.am* հասցեով, եթե ուզում ես հանդես գալ որպես մեր որևէ մրցույթի հովանավոր և ստանալ հանրայնացման (PR) և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (CSR) ներկայացման լայն հնարավորություններ: Մենք կուղարկենք մեր հովանավորչական փաթեթներն ու կքննարկենք համագործակցության բոլոր պայմանները:

*foundation.ayb.am/hy/donate*

Նվիրաբերիր



# ԴԻԼԻՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող երկրորդ դպրոցը՝ Դիլիջանի կենտրոնական դպրոցը, գործում է 2013 թվականից և բացվել է ՀՀ Կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ, ԿԲ-ի պատվերով և ֆինանսավորմամբ: Դիլիջանի կենտրոնական դպրոցը հիմնական դպրոց է՝ իր տարրական և միջին բաղադրիչներով (1-9-րդ դասարաններ): Այսօր ԴԿԴ-ում սովորում է մոտ 117 աշակերտ՝ 3 երկրից:

Դպրոցը հասանելի է ոչ միայն ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների, այլև Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների համար, և սովորելու պայմանները նույնն են բոլոր աշակերտների համար. ՀՀ ԿԲ-ն գրեթե ամբողջությամբ փոխհատուցում է բոլոր աշակերտների ուսման ծախսերը:

Իր գործունեության առաջին իսկ տարում Դիլիջանի կենտրոնական դպրոցն ազդեցություն ունեցավ մի քանի կապակցված ոլորտներում՝ կրթական, մշակութային, սոցիալական, համայնքաստեղծ:

*Դիլիջանի կենտրոնական դպրոցը խթան դարձավ Երևանից և Հայաստանի տարբեր շրջաններից ու անգամ արտերկրից ընտանիքների՝ մշտական բնակության նպատակով Դիլիջան քաղաք տեղափոխվելու համար, որպեսզի նրանց երեխաները հնարավորություն ստանան սովորելու ԴԿԴ-ում:*

**Դիլիջանի կենտրոնական դպրոցի աշակերտների**
**73 %-ը դիլիջանցի է,**
26%-ը՝ Երևանից,
1%-ը՝ Վանաձորից

**117 աշակերտ** **3 երկրից**
ուսանում է ԴԿԴ-ում



**27/91**
ՀՀ ԿԲ-ի աշխատակիցների և Դիլիջանում բնակվող այլ ընտանիքների երեխաների հարաբերակցությունը

**Ուսուցիչների 25 %-ը Դիլիջան է տեղափոխվել Երևանից՝**
ԴԿԴ-ում դասավանդելու նպատակով

*Իմացիր ավելին Դիլիջանի կենտրոնական դպրոցի կայքից և ֆեյսբուքյան էջից*

*Դիլիջանի կենտրոնական դպրոց / Dilijan Central School*

*www.dcs.am*



*Եթե ունես Դիլիջանի կենտրոնական դպրոցին աջակցելու առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով:*

*foundation.ayb.am/hy/donate*

Նվիրաբերիր

# Ֆինանսական հաշվետվություն*

## «Այբ» կրթական հիմնադրամի դրամական հոսքեր՝ ըստ ծրագրերի

### Դրամի ներհոսք

*2016 թ. | հազար ՀՀ դրամ*

| | |
|---|---|
| **«Այբ» ակումբի անդամավճարներ** | 83.914 |
| **Նվիրատվություններ կանոնադրական նպատակների համար** | 44.087 |
| **Նպատակային նվիրաբերություններ** | 920.293 |
| «Այբ» կրթական հանգույց (ԱԿՀ), նվիրատուներ | 5.921 |
| «Այբ» դպրոցի կրթաթոշակներ | 104.935 |
